ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Վայոց ձոր մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի թիվ 2 նիստի, կայացած 2025թ. Ապրիլի 15 -ին ք. Եղեգնաձոր.

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 6 անդամներից 6-ը, ինչպես նաև Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դավիթ Հարությունյանը, որը ըստ կարգի հանդիսանում է հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Միքաելյան / մարզպետ /
քարտուղար՝ Ա. Մարգարյան
անդամներ՝ Գ. Մարգարյան
Ա. Ղազարյան
Հ. Նազարյան
Է. Հովհաննիսյան
Դ. Հարությունյան

Հանձնաժողովը հաստատեց հետևյալ օրակարգը՝ Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի 1 /մեկ/ միավոր քաղաքացու համասեփականություն հանդիսացող 0,012 հա / ծածկագիր 10-015-0107-0008 / գյուղատնտեսական / կորիզավոր այգին փոխադրել ջրովի վարելահողի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

Լսեցին- Հանձնաժողովի նախագահ Կ. Միքաելյանը ներկայացրեց համայնքի ղեկավարի կողմից ներկայացված դիմումը:

Զեկուցողը նշեց՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի դիմումը և մեր հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ վերը նշված հողատարածքը իրոք փաստացի վարելահող է, ուստի տալիս ենք մեր դրական եզրակացությունը վերոնշված 0,012 հա գյուղատնտեսական/ կորիզավոր / այգին, որը հանդիսանում է քաղաքացի Արմեն Գաբրիելյանի սեփականությունը՝ դասել վարելահողերի շարքին:

Առաջարկվեց Եղեգնաձոր համայնքի ղեկավարին տալ դրական եզրակացություն համապատասխան որոշումը կայացնելու:

Հանձնաժողովը ելնելով վերոգրյալից՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ղեկավարվելով ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ՝ թույլատրել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին կայացնել համապատասխան որոշում համայնքի 1 /մեկ/ միավոր քաղաքացի Արմեն Գաբրիելյանի

սեփականություն հանդիսացող 0,012 հա / ծածկագիր 10-015-0107-0008 / գյուղատնտեսական / կորիզավոր / այգին փոխադրել ջրովի վարեահողի, չփոխելով հողակադաստրային գնահատման խումբը:

2. Հանձնաժողովի որոշման մեկական օրինակը տրամադրել հողի սեփականատիրոջը՝ համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Քարտուղար՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ